«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի
2014թ. 25.12 -ի
թիվ 7 նիստում

ԵՊՀ ԻՄ տնօրեն
Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմի (այսուհետ՝ ***Անձնակազմ***) ըստ ներկայացված չափորոշիչների խրախուսելու մասին սույն կանոնակարգը կազմվել է մասնաճյուղի տնօրենի 28.10.2014թ. թիվ 173 հրամանի հիման վրա, այդ կապակցությամբ կազմված հանձնաժողովի գործառույթները կարգավորելու համար:

1. 2. Սույն կանոնակարգը իրենից ներկայացնում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին իրավական փաստաթուղթ, որը կազմվել է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսդրության, մասնաճյուղի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների դրույթներին համապատասխան:

Կանոնակարգում եղած տեղեկությունները և չափորոշիչները նախատեսված են միայն մասնաճյուղի ներքին օգտագործման համար:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Սույն կանոնակարգը հնարավորություն է տալիս գործատուին խրախուսելու մասանճյուղի աշխատողին՝ պաշտոնական հրահանգով նախատեսված գործառույթները բարեխիղճ կատարելու և օրինակելի վարքի համար:

2.2. ***Անձնակազմին*** հաստատված չափորոշիչներով խրախուսելը իրականացվում է որոշակի հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքի և այդ ընթացքում նրա կողմից օրինակելի վարքագիծ դրսևորելու համար:

2.3. Չափորոշիչներով գնահատելը և խրախուսանքի միջնորդություն ներկայացնելը նպատակ ունի աշխատողի մոտ սերմանել աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, շարունակական անբասիր աշխատելու, նորամուծություններ կատարելու, հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն, սեր և ձգտում ցուցաբերելու համար:

2.4. Մասնաճյուղում չափորոշիչներով գնահատման և խրախուսման նպատակով անհրաժեշտ է.

- ստեղծել ինֆորմացիոն տեղեկությունների համապատասխան բազա, որը լիարժեք կարտահայտի խրախուսման ներկայացված աշխատողների աշխատանքի կատարման վիճակի և վարքագծի վերաբերյալ տվյալներ,
- խրախուսման նպատակով ներկայացված փաստաթղթերն ու տեղեկությունները քննարկելու նպատակով յուրաքանչյուր տարի մասնաճյուղում ստեղծվում է համապատասխան հանձնաժողով, որն իր գործառութային պարտականություններն կիրականացնի սույն կանոնակարգին համապատասխան,
- խրախուսելու վերաբերյալ փաստաթղթերը սույն կանոնակարգով նախատեսված չափորոշիչներին համապատասխան, կազմվում և անձամբ ներկայացվում է ստորաբաժանման ղեկավարի կողմից, որն էլ անձնական պատասխանատվություն է կրում տեղեկությունների օբյեկտիվության համար,
- հանձնաժողովը սահմանված ժամկետում քննարկում է ներկայացված միջնորդությունները, համաձայն չափորոշիչների գնահատում սահմանված միավորներով և վերջնական արդյունքները ներկայացնում մասնաճյուղի տնօրենությանը՝ համապատասխան որոշում կայացնելու համար,
- հանձնաժողովը իրավունք ունի ընտրական կարգով ստուգել ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացրած միջնորդությունների վերաբերյալ տեղեկությունների ճշտությունը, ինչպես նաև համապատասխան աշխատակցից պահանջել աշխատանքը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր:

2.5. Խրախուսանքն աշխատանքային կարգապահության ապահովման իրավական կարևորագույն միջոցներից մեկն է, որի իրականացման համար հիմք է հանդիսանում աշխատողի օրինակելի վարքագիծը, որը նրա կողմից աշխատանքային պարտականությունների այնպիսի կատարումն է, որը կարող է դրական օրինակ ծառայել մյուս աշխատողների համար:

2.6. Աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարումն իր մեջ ներառում է նաև դրանց կատարումն անձամբ, սահմանված կամ պայմանավորված ժամկետում նախատեսված վայրում, ինչպես նաև՝ գիտակից, արդյունավետ, հոգատար վերաբերմունք ստանձնած պարտականությունների կատարման նկատմամբ:

3.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու հանձնաժողովի կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսդրության մասնաճյուղի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և մասնաճյուղի այլ իրավական ակտերի հիման վրա:

3.2. Հանձնաժողովի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է նրա նախագահը, որին նշանակում և ազատում է մասնաճյուղի տնօրենը: Նախագահն ապահովում է հանձնաժողովի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը, անդամներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, որոնք նրանց կողմից ենթակա են պարտադիր կատարման:

Հանձնաժողովի նախագահն առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի տնօրենին, հանձաժողովի անդամներին սահմանված կարգով խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու մասին:

Առաջարկություն է ներկայացնում իր բացակայության ժամանակ փոխարինող նշանակելու մասին:

3.3. Հանձնաժողովի անդամների թվաքանակը որոշում է մասնաճյուղի տնօրենը, որոնք ևս նշանակվում են մասնաճյուղի տնօրենի հրամանով:

3.4. Հանձնաժողովի քննարկման ենթակա խրախուսանքի տեսակներն են.

ա/ շնորհակալության հայտարարում,

բ/ միանվագ դրամական պարգևատրում,

գ/ պատվոգրի հանձնում,

դ/ հուշանվերով պարգևատրում,

ե/ կարգապահական տույժի հանում,

զ/ լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:

Առանձին դեպքերում հաշվի առնելով մասնաճյուղում աշխատողի երկարամյա աշխատանքը և գիտությանն ու կրթությանը մատուցած ծառայությունը, խրախուսելու նպատակով կարող է միջնորդություններ կայացվել վերադաս մարմիններին՝ մեդալով, պատվոգրով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու համար:

3.5. Յուրաքանչյուր աշխատողի վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկությունները քննարկվում են առանձին և որոշումը կայացվում է անհատական կերպով:

4. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԵՊՀ ԻՄ աշխատակիցների խրախուսելը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- արդարության,
- օրինականության / օրենքի գերակայության/,
- հրապարակայնության,
- անձնական արժանիքների և ձեռքբերումների գնահատման,
- աշխատանքի արդյունավետությանը նպաստելու,
- խրախուսման տարբեր ձևերի համադրության,
- աշխատակիցների խրախուսման և պարգևատրման ոլորտում կազմակերպության ղեկավարության լիազորությունների սահմանափակման:

5. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԵՊՀ ԻՄ աշխատակիցները բարոյական խրախուսման համար պարգևատրվում են շնորհակալագրով և պատվոգրով՝ համաձայն Աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշների:

ԵՊՀ ԻՄ աշխատակիցների նյութական խրախուսման հիմքում ընկած է յուրաքանչյուր աշխատակցի գործունեությունը միավորներով գնահատելու մեխանիզմը՝ առավելագույնը 20 միավոր: Աշխատակիցներին միավորներ հատկացվում են նրանց գործունեության հետևյալ դրսևորումների գնահատմամբ.

1. աշխատանքային կարգապահություն և աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարում,
2. հասարակական ակտիվ գործունեություն,
3. մասնագիտական արդյունավետ գործունեություն:

Մասնագիտական նորարական, արդյունավետ գործունեության խրախուսման համար աշխատակիցները, ըստ գործունեության առանձնահատկությունների, բաժանվում են երկու խմբի. պրոֆեսորադասախոսական ու վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմեր:

Նյութական խրախուսման համար աշխատակիցների գործունեության գնահատումն իրականացվում է՝ համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված չափանիշների:

Յուրաքանչյուր ամսվա վերջում հանձնաժողովը, ըստ հավաքագրած համապատասխան փաստաթղթերի, իրականացնում է աշխատակիցների գործունեության գնահատում:

Նյութական խրախուսման չափը կախված է ձեռք բերած ընդհանուր միավորների քանակից և ըստ միավորների խմբերի՝ 18-20, 15-17, 12-14, 9-11, հատկացվում է նյութական խրախուսում ընդհանուր գումարից համաձայն հանձնաժողովի որոշման և տնօրենի հրամանի:

Բարոյական խրախուսում աշխատանքային գործունեության համար

Աղյուսակ 1

N	*Խրախուսման ձևը*	*Խրախուսման հիմքը (չարժառիթը)*
1.	Շնորհակալության հայտնում	Աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարման, կազմակերպության միջոցների խնայողության, ամրագրված գործառույթների վաղաժամկետ կատարման, մատուցած ծառայությունների բարելավման և արդյունավետության բարձրացման, նորարարական գործունեության համար
2.	Պարգևատրում պատվոգրով	Երկարատև և անբասիր աշխատանքի, 5 տարի շարունակ աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարման, մասնագիտական վարպետության, մասնագիտական բարձր արդյունքների և ցուցանիշների հասնելու համար

Պարգևավճարի տրամադրում աշխատանքի ընդհանուր գնահատման հիման վրա

Աղյուսակ 2

	Գործունեության տեսակը	*Առավելագույն միավորը*
1.	*Աշխատանքային կարգապահություն և աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարում*	*5*
1.	Կազմակերպության միջոցների խնայողության համար	1
2.	Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային պլանով ամրագրված գործառույթների վաղաժամկետ և որակյալ կատարման համար	1
3.	Նախորդ ուստարվա համար աշխատանքային պլանի լիարժեք իրականացման և գերակատարման համար /ամբողջ ուստարվա համար/	2
4.	Ստորաբաժանման ղեկավարի կողմից գործունեությունը բարձր գնահատելու համար	1
2.	*Հասարակական ակտիվ գործունեություն և կրթական տարածքում մասնաճյուղի հեղինակության բարձրացում*	*3*
1.	Մասնաճյուղի գործունեության անխափան իրականացման և տարբեր հանձնաժողովներում կատարած աշխատանքի համար	1
2.	Մշակութային և դաստիարակչական տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար	1
3.	Արդյունավետ և անթերի կատարած լրացուցիչ աշխատանքի համար	1
3.	*Մասնագիտական ակտիվ և արդյունավետ գործունեություն*	*12*
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ		
	ա) Գիտական գործունեություն	3
1.	Հրատարակած մենագրության, առանձին թեզերի, հրատարակած հոդվածի (հոդվածների) համար	2
	Գիտական կոնֆերանսներին ունեցած մասնակցության, կազմակերպման, գիտական կոնֆերանսների ժողովածուներում զեկուցումների թեզիսների հրատարակման համար	
	Դոկտորական կամ թեկնածուական ատենախոսության պաշտպանության, թեկնածուական մինիմումների քննության հանձնման համար	
2.	Որակավորման բարձրացման դասընթացներում, սեմինարներում որակավորման բարձրացման, ստաժավորման համար (համապատասխան վկայականի, սերտիֆիկատ-հավաստագրի առկայությամբ)	1
	բ) Ուսումնամեթոդական աշխատանք	9
1.	Դասագրքի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման համար /ամբողջ ուսումնական տարվա ընթացքում/	2
2.	Դասընթացի նոր փաթեթի մշակման, նոր դասընթացի իրականացման համար /կիսամյակի ընթացքում/	

3	Ուսումնառության ժամանակակից ակտիվ, իներակտիվ նաև տեղեկատվական մեթոդների կիրառման համար (համապատասխան մեթոդական ուղեցույցի առկայությամբ)	2
4.	Բուհական ուսանողական կոնֆերանսների, սեմինարների, տարբեր օլիմպիադաների, մրցույթների կազմակերպման համար	1
5.	Ֆակուլտետի խորհրդի կողմից լավագույն համարված բաց դասի համար	2
	Դասալսումների արդյունքում ամբիոնի վարիչի տված բարձր գնահատականի համար	
6.	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումից ստացած գնահատականի համար /հրատարակման օրվանից մինչև մյուս հրատարակում՝ ըստ աղյուսակ 3-ի/	2
Վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմ		**12**
1.	Նորարարական գործունեության համար /ամբողջ ուսումնական տարվա ընթացքում/	3
2.	Մասնագիտական վարպետության, մասնագիտական բարձր արդյունքների և ցուցանիշների հասնելու, մատուցած ծառայությունների համար	6
3.	Համակարգված աշխատանքի, կարգապահության, ստեղծագործական գործունեության, պարտականությունները օրինակելիորեն կատարելու համար համար	3

Աղյուսակ 3

N	*Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումից դասախոսի ստացած գնահատականը*	*Միավորը*
1	4.6-5	2
2	4.0-4.5	1
4	<4	0